ԱԶԱՏ, ԱՆԿԱԽ ԵՎ ՄԻԱՑՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆ (ԱԶԳԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ)*

ԱՐՏԱՇԵՍ ԱԲԵՂՅԱՆ

7

Հայաստանի և հայ ժողովրդի համար բոլշևիկյան դիկտատուրան առավել ևս սնհանդուրժելի է այն տեսակետից, որ նա ծնունդ չէ մեր իրականության, այլ ներածովի վարչակարգ է:

Այսպես կամ այնպես, նա բուն Ռուսաստանում հետևանք է ներքին պայքարների, քաղաքացիական կռիվների: Հաղթական բոլշևիզմը հաստատեց այնտեղ իր դիկտատուրան: Որչափ և ծանր է այդ լուծը, բայց ռուս ժողովուրդը ստիպված է տանել նաև այն պատճառով, որ նա բավականաչափ կորով հանդես չբերավ՝ անկարելի դարձնելու այն: Պարտվեց բռնատեր փոքրամասնության առաջ և հարկադրված եղավ ենթարկվել նրա թելադրած կարգերին:

Բոլշևիկյան ռեժիմը Հայաստան մտցվեց դրսից, Կարմիր բանակի ձեռքով, այնպես, ինչպես որ հարյուր տարի առաջ ցարական ռեժիմ էր այնտեղ ներմուծվել ճերմակ բանակի ձեռքով: Սակայն կարմիր թե ճերմակ ռուս, նա չէ դադարում մեզ համար օտար լինելուց: Եվ եթե մի տարբերություն կա նրանց մեջ, այդ էլ այն է, որ մինչ հարյուր տարի առաջ ռուս բանակը Այրարատյան Հայաստանը գրավելով փոխարինեց դարձյալ մի օտար, պարսից բանակին, և որը, վերջինիս բաղդատությամբ, ամեն տեսակետից փերադասելի էր հայության համար և այդ պատճառով էլ ժամանակակից սերունդի կողմից (հիշեցեք «Վերք Հայաստանին») մինչև իսկ ազատարար հռչակվեց, ռուս Կարմիր բանակը, ընդհակառակը, Հայաստան մտնելով 1920-ին՝ բռնի ուժով վերադրեց հարազատ, ազգային իշխանությունը, տապալեց երկրի քաղաքական ինքնուրույնությունը, այն փոխարինելով օտար իշխանությամբ ու կարգերով:

Վերջապես այսօր էլ լրջորեն չեն կարող պնդել բոլշևիկները, թե խորհ. ռեժիմը Հայաստանում՝ իսկապես որ արդյունք էր «բանվորագյուղացիական» «նոյեմբերյան հեղափոխության»:

Բոլշևիկյան ռեժիմը հանդուրժելի չէ Հայաստանի և հայ ժողովրդի համար ոչ միայն այն տեսակետից, որ նա կապտել է մեր ժողովրդի քաղաքական և քաղաքացիական ազատությունը, կաշկանդել նրա տնտեսական վերելքը, այլև այն տեսակետից, որ նա, անազատ վիճակ ստեղծելով մեր երկրում, անդամալուծել, անկարելի է դարձրել մեր երկրի ու ժողովրդի համար ոչ պակաս կարևորություն ունեցող ազգահավաքման հրամայական պահանջը, որի սկիզբը դրված էր, լայն չափերով, ազգային-հանրապետական կառավարության օրով:

Կարճ, եթե դիկտատուրայի տապալումը և դեմոկրատական-ազատ կարգերի վերականգնումը կենսական անհրաժեշտություն է ռուս և Ռուսաստանի բոլոր ժողովուրդների համար, նա կրկնակի պահանջ է հայ ժողովրդի համար: Ազատության պայքարը ավելի քան որևէ ուրիշ տեղ՝ Հայաստանում կարող է գտնել իր սկզբունքային արդարացումը:

---

* Սկիզբը տե՛ս ՀՀ ԳԱ «Լրաբեր» հաս. գիտ., 1991, № 1, էջ 139—149:

Ահա թե ինչո՞ւ այնչափ ժողովրդականություն ունեցավ փետրվարյան ապստամբությունը Հայաստանում, որ միահամուռ բռնկումով վերջ տվավ, թեև կարճ ժամանակով, տիրող դիկտատուրային, վատթարագույն ձևի տակ։ Իսկապես սխալ էլ է՝ փետրվարյան պատմական անցքերը. «ապստամբություն» որակելը, ինչ որ սովորաբար արվում է մեզնում, քանի որ նրանք, այդ դեպքերը, ըստ ամենայնի ի հայտ են բերել բոլոր հեղափոխություններին հատուկ հիմնական գծերը։ Ավելի ճշմարիտ է խոսել ուրեմն ոչ թե փետրվարյան ապստամբության, այլ փետրվարյան հեղափոխության մասին։

Եվ սակայն եթե հեղափոխության, ազատ ապրելու պահանջը անկապտելի իրավունքն է ամեն մի ժողովրդի, այդ դեռ չէ նշանակում թե նաև նրա պարտականությունն է՝ կիրարկել այն բոլոր պայմաններում։ Նա մի երկսայրի սուր է, որ հեշտությամբ կարող է իր իսկ՝ կրողի դեմ դառնալ և նրան վնասել, փոխանակ շահ բերելու նրա գործին։ Ուրիշ խոսքով՝ ամեն մի հեղափոխական քայլ կարող է արկածախնդրականի վերածվել, եթե չէ հասունացած նա ըստ ամենայնի, եթե չէ ապահովված նրա հաղթանակը։

Խորհրդային դիկտատուրան տապալելը և նրան դեմոկրատականով փոխարինելը ո՞չ սոսկ Հայաստանի և հայ ժողովրդի գործն է, ոչ էլ նրա ուժերի համապատասխան մի ձեռնարկ։ Դա նախ և առաջ ռուս մեծ ժողովրդի գործն է, որ և իրականություն դառնալ կարող է միայն այն ժամանակ, երբ համառուսական չափանիշով հասունացած լինի նա և ապահովված նրա հաղթանակը—հեղափոխությամբ թե բարեշրջությամբ, դա տարբեր խնդիր է։

Անկարելի է կարծել, թե հնարավոր է առհասարակ, որ Հայաստանում կամ Կովկասում ազատ, դեմոկրատական կարգեր իշխեն, մինչ անդին Ռուսաստանում շարունակի փթթել դիկտատուրան։

Եվ վերջապես հայ ժողովուրդը և ոչ իսկ մեկ կաթիլ արյուն տրամադրել կարող է մի դատի համար, որչափ և արդար լինի նա ու նաև իրենը, եթե միայն՝ զենքի պայքարը չէ բռնադատված նրան տիրող իշխանության կողմից, ինչ որ եղավ 1920 փետրվարին, և եթե դրանից դուրս ուրիշ ելք չէ մնում։ Ու պատմության առաջ միայն և միայն այդ տեսակետից հիմնավորվիլ ու արդարանալ կարող է ամեն մի հեղափոխություն առհասարակ, դրանց թվում ուրեմն նաև հայկականը և մասնավորապես փետրվարյանը։

Ահա թե ինչու Ռուսաստանի ժողովուրդների համար ընդհանրապես և մեզ համար մասնավորապես— կան նաև ուրիշ պատճառներ—անբաղդատելիորեն ցանկալի, գերադասելի է, որ բարեշրջման հանապարհով տեղի ունենա Խորհ. Միության մեջ փոխանցումը—որչափ և երկարաձգվի նա-դիկտատուրայից դեպի դեմոկրատիա։

Ահա թե ինչու Հ. Հ. Դաշնակցությունն էլ ստեղծված պայմաններում, մնալով հանդերձ պայքարողի դերում գաղափարական գետնի վրա ընդդեմ բոլշևիզմի, ժխտում է հեղափոխական գործոն կռվի կարգախոսը՝ տիրող ռեժիմի դեմ։

Եվ որովհետև ազատության վերստացումը ոչ միայն հայ, այլև ռուս և Ռուսաստանի բոլոր ժողովուրդների ազատատենչ, դեմոկրատական տարրերի նպատակակետն է, և որովհետև նրանք այդ և մի շարք ուրիշ խնդիրներում organապես կապված են իրար հետ, ապա ուրեմն միանգամայն հասկանալի է, որ այդ տարրերը համաձայնության պիտի գան իրար հետ, իրենց անխտիր ամենի էլ կապված ազատությունը ձեռք բերելու խնդրում։ Եվ այսպես, Միացյալ Հայաստանին պիտի նախորդե Ազատ Հայաստանը։

Անազատ ժողովուրդը ընդունակ չէ ազգահավաքման։ Եվ սակայն դրա համար նա պետք է լինի ոչ միայն ազատ, այլև անկախ։

8

1920—21-ին Հայաստանը կորցրեց իր ազատությունը, կորցրեց իր անկախությունը, ինչպես նաև հնարավորությունը՝ ստեղծելու ազգային և հո-

զային միություն։ Այդ ամենի իրականացումը թեև չվերացավ առհավետ, բայց մեծապես դժվարացավ, երկարաձգվեց շատ։

Եվ ինչպես որ, ստեղծված պայմաններում, դյուրին և կարճ ժամանակվան խնդիր չէ Միացյալ և ազատ Հայաստանի իրականացումը, թերևս առավել ևս դժվարին է նրա կատարյալ անկախության վերականգնումը։

Համառորեն հետապնդելով հանդերձ սեր ազգային քաղաքականության հիմնական նպատակները, մենք պարտավոր ենք հաշվի առնել իրական պայմանները, մեզ շրջապատող բոլոր ուժերը։

Հարկավ, յուրաքանչյուր մի ազգ ինքն է, իր ներքին բովանդակ կարողություններով, գլխավոր ազդակը սեփական քաղաքականության, բայց նրանից դուրս և հաճախ նրանից ուժեղ ուրիշ ազդակներ ևս կան, որ հաճախ խաչաձևել կարող են այդ ձգտումները, և որ անկարող են հաշվի չառնել մանավանդ անազատ, հպատակ ժողովուրդները։

Եվ մենք իրավունք չունինք միամիտ լինելու ու պատրանք սնուցանելու, թե այո, բոլշևիկյան դիկտատուրան տապալվելուց կամ վերանալուց հետո պետք է դյուրությամբ ձեռք բերենք ոչ միայն մեր ազատությունը, այլև մեր անկախությունը։

Գաղտնիք չէ հարկավ, որ ոչ միայն ռուս միապետականները, այլև ռուս դեմոկրատ խմբակցությունը, անգամ ընկերվարականներից շատերը բնավ հակամետ չեն՝ Հայաստանին վերադարձնելու իր անկախությունը։ Վերապետական, կատարելապես գերիշխան Հայաստան, դա համադուրժելի չէ կարող լինել Ռուսաստանի ապագա որևէ իշխանության համար։

Այդ մենք գիտենք ու չգիտնալը առնվազն անիրատեսություն պիտի լիներ մեր կողմից։ Անկարելի է չտեսնել, մյուս կողմից, տարբերությունը վերը հիշատակված ռուս տարրերի մեջ։ Այսպես, ռուս միապետականները իշխանության գլուխ գալով ոչ միայն պիտի հիմքում ժխտեն Հայաստանի անկախության ամեն մի իրավունք, այլև բոլշևիկյան դաժանությամբ պիտի շարունակեն ճնշել Հայաստանի ազատությունը։

Ահա թե ինչու, կրկնակ տեսակետներով, անընդունելի են մեզ համար ռուս միապետականների նկրտումները։ Նրանք ոչ միայն կը շարունակեն կապտել մեր ժողովրդի ազատությունը, այլև մեջտեղից կը վերացնեն մինչև իսկ ինքնուրույնության այն փշրանքները, որ այսօր—լինի դիկտատուրայի պայմաններում—դեռ բաժին են մնացած մեր երկրին ու ժողովրդին։

Քաղաքական-ազգային խնդիրներում միապետականները կը գերազանցեն բոլշևիկներին իրենց ճնշումներով, քաղաքացիական խնդիրներում շարունակելով հանդերձ ընթանալ վերջիններիս գծած ճամփայով։

Այդ տեսակետից բնավ անհեթեթ չէ հնչում «ցար» Կիրիլլի գերման մի թերթում հրատարակած «հրովարտակի» ծրագրային այն խոսքը թե՝ ապագա Ռուսաստանը պիտի լինի խորհրդային միապետություն։ Ապահնքն՝ բոլշևիկների ստեղծած խորհուրդները (սովետները) պիտի մնան ինչպես որ կան ներկայիս, միայն թե նրանց գլուխը պիտի կանգնի ինքը, ապագա ցարը։ Ուրիշ խոսքով՝ Սթալին և Սթալինները Կիրիլլով ու Կիրիլլներով պիտի փոխարինվին, առանց ձեռք տալու խորհրդային վարչակարգի միջուկին։

Եվ այս-ինչպես նաև մի շարք ուրիշ-խնդրում գրեթե նույնանում են ռուս բռնապետության երկու թևերը—բոլշևիկյան և միապետական։ Զուր տեղը չէ արդեն, որ ռուս միապետականները հաճախ ծափահարում են բոլշևիկների արտաքին և ազգային քաղաքականությունը։ Ռուս կայսերապաշտները իրականացած են տեսնում իրենց ծրագրի մի մասը բոլշևիկների ձեռքում. Ի՞նչ ամենիո առաց—Ռուսաստանի միացումը և ամբողջացումը, «ռուս հողերի հավաքումը»։

Եվ սակայն բոլշևիկներից և միապետականներից դուրս կան նաև քառաքական ուրիշ ազդակներ՝ Ռուսաստանի ապագան կերտելու խնդրում։ Իսկ այդ ապագան չէ կարող լինել միապետական թեկուզ հենց նրա համար

միայն, որ չկա այլևս, վաղուց վերացել է նրա տնտեսական-ընկերային խարիսխը, ուստ կալվածատեր ազնվականությունը, այլև խոշոր բուրժուազիան։ Որպես գերազանցորեն աշխատավորական-գյուղացիական երկիր, Ռուսաստանի ապագա վարչակազմը կարող է լինել միայն և միայն դեմոկրատական-հանրապետական, ղեկավարությամբ ընկերվարականների և ժողովրդավար տարրերի։

Իհարկե վերջիններս ևս առանց այլևայլի Հայաստանին չպիտի վերադարձնեն իր անկախությունը։ Բայց նախ, գեթ իր ազատությունը կը ստանա հայությունը, և ապա՝ հանրապետական-դեմոկրատական Ռուսաստանում իրական ֆեդերացիան կը գա բռնելու այժմյան կեղծ, երևութական ֆեդերացիայի տեղը։ Խորհրդային պայմաններում լրջորեն խոսել «ֆեդերացիայի» մասին՝ ավելի քան միամտություն պիտի լիներ։

Ֆեդերացիայի էությունը նրա բաղադրիչ երկրների և ժողովուրդների ազատության և ապակեդրոն վարչաձևի մեջ է կայանում, մինչ բոլշևիզմի էությունը—դիկտատուրան է և ծայրահեղ կենտրոնացումը։

Ռուսաստանը, որ ազգայնորեն միատարր չէ բնավ, այլ բազմատարր, որ բուն ռուս (վելիկոռուս) ցեղը ողջ ազգաբնակչության հազիվ 60 % է կազմում, ապագային պիտի լինի կամ հանրապետական-դաշնակցային և կամ նորեն, մի անգամ ևս պիտի կործանվի, հարկավ, կրկին ոտքի կանգնելու համար, բայց ազատ-դաշնակցային պատվանդանի վրա։ Եվ ինչ խոսք, որ այդպիսի Ռուսաստանը, անգամ եթե նա հարկադրաբար իր մեջ պահի Հայաստանը, հազար անգամ ավելի գերադասելի է հայ ժողովրդի շահերի տեսակետից, քան խորհրդային արդի «ֆեդերացիան»։

Հասկանալի է ուրեմն, որ հայ ազգային քաղաքականությունը, առաջնորդվելով սեփական իսկ շահերի գիտակցությամբ, ողջունել միայն կարող է Ռուսաստանի ապագա վերականգնումը՝ դեմոկրատական-դաշնակցական գետնի վրա։

9

Հանրապետական դաշնակցային Ռուսաստանը հայ ժողովրդին ոչ միայն չի զրկի իր մարգկային-քաղաքացիական ազատություններից, որ ինքնին արդեն բարիք են, ոչ միայն նրան հնարավորություն կը տա շատ ավելի լայնորեն զարգացնելու իր ազգային մշակույթը—դպրոց, արվեստներ, գիտություն, լեզու և գրականություն—այլ անկարելի է, որ նա գեթ մասամբ բավարարություն չտա, թեկուզ հենց իր պետական սահմաններում, Հայաստանի հողային արդար պահանջներին։

Ամեն մի դաշնակցային պետական կազմ, եթե նա կեղծ չէ խորհրդայինի պես, անհրաժեշտաբար պիտի առաջնորդվի երկու հիմնական սկզբունքներով—ազգային-լեզվական ու աշխարհագրա—տնտեսական։

Արդ, այդ երկու սկզբունքներն էլ խոսում են հօգուտ Հայաստանի ընդարձակման (համապետական սահմաններում)։

Արդ, Լեռնային Ղարաբաղն ու Գանձակը, և Ախալքալաքը գերազանցորեն հայկական են բնակչության բեղային կազմով, աշխարհագրորեն և տնտեսորեն էլ անբաժան մասերն են հայկական բարձրավանդակի։ Շարուր-Նախիջևանը ևս տնտեսորեն Արարատյան դաշտի մի մասնիկն է, նրանից անբաժան, որով և անհրաժեշտություն պիտի դիտվի նրա վերակցումը ևս Հայաստանին։

Եվ հիրավի, դեմոկրատական Ռուսաստանը տակավին իր գոյության արշալույսին, 1917 թ. գարնանը, պաշտոնապես համանություն տվավ հայության հողային այդ նվազագույն պահանջներին։ Կերենսկիի ժամանակավոր կառավարությունը միանգամայն արդարացի գտավ Անդրկովկասի նախագծված վարչական նոր բաժանումը, որով վերոհիշյալ գավառները ճանաչվեցին որպես հայկական։ Թե ինչ պատահեց այնուհետև, հայտնի է։ Որ Ռուսաստանի ապագա որևէ դեմոկրատ-դաշնակցային կառավարություն ևս

դժվար թե անտես անի մեր այդ պահանջները, ավելի քան հավանական է։

Եվ այդպես պիտի վարվի նա հարկավ ոչ թե մեր սիրուն աչքերի խաթեր, այլ առաջնորդվելով համապետական շահերով, որ տվյալ սահմաններում նույնանալու են հայկական շահերի հետ։ Երկրորդ, նրա համար, որ հանրապետական-ազատ կարգերում, ուր պիտի իշխե իրավունքը և ազատ կամքի արտահայտությունը ժողովուրդների, անկարելի է դյուրությամբ ոտնատակ տալ վերջիններիս սրբազան իրավունքները, փակելով նրանց բերանը, ինչ որ բխում է ամեն մի բռնապետական ռեժիմի էությունից իսկ, լինի նա ցարական, թե բոլշևիկյան։

Եվ սակայն ոչ միայն ներքին, այլև արտաքին քաղաքականությունից դրդված՝ հանրապետական դաշնակցային Ռուսաստանը պիտի նպաստի հայության և Հայաստանի ոտնահարված իրավունքները գեթ մասամբ շտկելու։

Քաղաքական մանուկների համար միայն պարզ չէ այն, որ արդի Հայաստանի հողային և ամեն կարգի զրկանքները այսօր՝ արդյունք են նախ և առաջ Խորհրդային Մոսկվայի և բեմալական Անգորայի բարեկամության, այդ երկուսի դաշնակցության։ Այս վերջինիս զոհ բերեց Ռուսաստանը ի թիվս ուրիշ բաների նաև մեր հայրենիքի կենսական շահերը։ Ընդհանուր թշնամու—Անգլիայի—դեմ պայքարելու, ինչպես նաև «համաշխարհային հրդեհը» Ասիայում վառելու մոլուցքով տարված՝ Մոսկվան ձեռք մեկնեց դարավոր ոսոխին։

Որ սակայն այդ պատրանքները վաղ թե ուշ հօդս պիտի ցնդեն, որ ապագա ազատ Ռուսաստանը պիտի հիմնական վերաքննության ենթարկի իր խորհրդային նախորդի արևելյան քաղաքականությունը, ավելի քան պարզ է։

Պարզ է նաև այն, որ այդ քաղաքականության առաջին արդյունքներից մեկը պիտի լինի՝ առնվազն ու առաջին հերթին քեմալական Տաճկաստանի կողմից գրավված անդրկովկասյան գավառների վերստացումը։ Թող դա կատարվի Ռուսաստանի անունով և նրա ընդհանուր շահերի համար, բայց որ Սուրմալուն, Կարսը և Արդահանը նորեն Անդրկովկասին անցնելով ու թեկուզ վարչականորեն միայն Հայաստանին կցվելով մեծապես պիտի շահի նաև վերջինս, ակներև է ինքնին։

Երևակայել, թե ռուսական որևէ կառավարություն դյուրությամբ պիտի զիջի Կարսը Տաճկաստանին, անկարելի իսկ է։ Եվ նա այդ չի անի, որովհետև վատագույն պարագային իսկ՝ նա ռազմապես և քաղաքականապես անբաղդատելիորեն ուժեղ պիտի լինի, քան այսօրվան Խորհրդային Ռուսիան։ Փաստ է, որ վերջինիս ձայնը և դիրքը միջազգային խնդիրներում ավելի թույլ է և անզոր, քան որևէ ռուս կառավարության՝ անցյալում։

Խորհրդային Ռուսիան—չխաբվենք շլացուցիչ բառերից և գոռում-գոչյունից—այսօր ավելի ինչ չէ, քան մի երկրորդական պետություն՝ որպես միջազգային քաղաքական ազդակ։ Կարելի բան է, որ 150—160 միլիոն հաշվող մի երկիր մշտապես այդ վիճակի մեջ մնա։ Հարկավ ոչ։

Ահա թե ինչու։ Անգորայի վարիչները որպես երկնքից ընկած մի բարիք ողջունեցին Խորհրդային Ռուսաստանը—թուլացած և անզոր, ռազմական-քաղաքական ստվերը իսկական Ռուսաստանի։ Եվ ահա թե ինչու ի մեջ այլոց, Անգորան դողում է ամեն մի հավանականության առջև, որ Ռուսաստանի վերակազդուրման, վերականգնման մասին է խոսում։ Մանավանդ նա գիտե, որ վերազարթնած ռուսական ծովի ալիքները ի զորու պիտի լինին շատ ավելի հեռուները ևս հորձանքներ առաջացնելու։ Պարզ է ուրեմն, որ Տաճկաստանը թեկուզ այդ իսկ մեկ հատիկ պատճառով—շատ ուրիշները ևս կանբոլշևիկ դիկտատորներից հետո կամ նրանց համահավասար՝ շահագրգռված է Խորհրդային վարչակարգի պահպանումով և հարատևումով, բայց միայն... իրենից դուրս, Ռուսաստանում։ Որ նույն այդ ռուսական ռեժիմը հայկական ծառայություններ է մատուցել և մատուցում է Տաճկաստանին ուրիշ ճակատներում ևս, դա ևս աշխարհին ծանոթ փաստ է։

10

Եվ այսպես, ապագա Ռուսաստանը, որ որպես դաշնակցային հանրապետություն միայն վերականգնել կարող է, բոլոր պարագաներում շատ ավելի նպաստավոր պիտի լինի հայկական և Հայաստանի շահերի տեսակետից, քան՝ արդի, խորհրդային Ռուսաստանը։ Վատթարագույն պարագային իսկ՝ նա ավելի ընդունելի պիտի լինի մեզ համար, ներկայիս բաղդատությամբ, քանի որ նա գեթ ինքն իր համար և իր մեջ ուժեղ պիտի լինի՝ հանդեպ հարևան Տաճկաստանի, որով և հայությունը ամենավատ պարագային գեթ իր փոքրացված հայրենիքում շարունակ չպիտի դողա իր ֆիզիկական գոյության, իր վաղվան համար։

Լինինք արդար և չուրանանք պատմական փաստերը։ Ցարական կառավարությունն անգամ այնչափ դաժան, անսիրտ չեղավ կարկտահար, փախըստական հայ բեկորների հանդեպ, որչափ խորհրդային Ռուսաստանը։ 1895—1896-ի կոտորածներից հետո՝ տասնյակ հազարավոր փախստական տաճկահայերի մուտքը չարգիլվեց Կովկաս և Ռուսաստան, ինչպես այժմ է արվում։

1915-ի և հետագա նահանջներին 150—200 հազար թրքահայություն ապաստան գտավ Կովկասում և Հայաստանում։ Ինչ խոսք, ցարական Ռուսիան ինքն ևս ոճրապարտ էր թրքահայության հանդեպ, բայց միթե ավելի թեթև է կշռում՝ խորհրդային Ռուսիո ոճիրը՝ հանդեպ մեր տասնորդված զանգվածների։ Ինչպես է որ, վերջապես, խորհրդային կառավարությունը տեր է կանգնում հին Ռուսաստանի ողջ ժառանգության, այնինչ նա հրաժարվում է իր նախորդի փոխարեն պարտահատույց լինելու՝ պատճառած զոհերի ու պարտքերի հանդեպ։

Կուզենք լանք, կուզենք ողբանք, փաստը մնում է փաստ։ Հազար կըղպանքներով փակված են այսօր Ռուսաստանի և Հայաստանի դռները՝ համաշխարհային և խորհրդային դիվանագիտության բազմահազար զոհերի առջև։ Այսչափ դաժան լինել չէ կարող, խոստովանենք այդ, որևէ ռուս կառավարություն՝ ապագա ազատ Ռուսաստանում։ Անկարելի է, որ նա հայ փախստականների առջև գեթ այն չափով բաց չանի իր և նրանց, այդ փախըստականների, հայրենիքի դռները, որչափ արավ թեկուզ մի փոքրիկ, պարտված ու աղքատացած Բուլղարիա կամ Հունաստան։

Ինչ խոսք, ապագա դաշնակցային Ռուսաստանի մի ինքնավար մասը կազմող Հայաստանը տակավին այն անկախ Հայաստանը չէ, որ կազմում է մեր քաղաքական ձգտումների առարկան։ Բայց դա մի կարևոր հանգրվան պիտի լինի դեպի ցանկալի անկախությունը, որ գալ կարող է նաև ուրիշ, արտաքին ու ներքին նպաստավոր պայմանների դասավորումով, որին դեմ չլինի անգամ Ռուսաստանը՝ իր իսկ շահերի տեսակետից։

Ուրիշ խոսքով՝ գերիշխան, անկախ Հայաստանը վերստեղծվել կարող է որպես արդյունք միջազգային ուժերի նոր դասավորման, ուր ազատ Ռուսաստանը կարող է մինչև իսկ նախաձեռնողի դեր ստանձնել, քանի որ միանգամայն հնարավոր է հաշտեցումը անկախ Հայաստանի և ազատ Ռուսիո քաղաքական շահերի։

Բոլոր պարագաներում՝ անկախ, գերիշխան Հայաստանն իսկ՝ տնտեսական և քաղաքական որոշ հարաբերության մեջ պիտի մտնի, իր իսկ շահերից գրգռված, ինչպես իր դրացի երկրների, այնպես և ապագա Ռուսաստանի հետ։

Քաղաքական անկախությունը ինքնանպատակ չէ մի ազգի համար, այլ միջոց՝ նրա բովանդակ ուժերը բազմակողմանիորեն զարգացնելու համար։ Անհնար բան չէ երբեք, որ այս իսկ՝ ազգային գերագույն շահերի տեսակետից՝ մի ազգ հանձն առնի իր կատարյալ անկախության, գերիշխան գոյության մի որոշ սահմանափակումը։

Եվ իսկապես, ազգերի քաղաքական զարգացումը միալար, ուղղագիծ ընթացք չունի։ Մի կողմից նա տանում է դեպի ինքնուրույնություն, իսկ մյուս կողմից, վերջինիս սահմանափակման գնով, դեպի մերձեցում և կապակցու-

թյուն ուրիշ միավորների հետ։ Կենտրոնացումը և ապակենտրոնացումը իրար համընթաց երևույթներ են։ Ազգային-մշակութային պահանջը նպաստավորվում է միշտ ապակենտրոն կարգերում, իսկ տնտեսականը՝ կենտրոնացման ճամփայով։ Դրանով պիտի բացատրել, որ, օրինակ, մաքսային պատնեշները վերացնելու անհրաժեշտության առաջ պատրաստ են իրենց վեհապետական որոշ իրավունքներից հրաժարվել անգամ մեծ պետությունները։

Խնդիրը դրանում չէ, ոչ էլ անկախության շրջանակի մասին։ Վերջինս կարող է լինել լայն կամ նեղ, անգամ բավական սահմանափակված՝ դաշնակցային կարգերով, նայած պայմաններին և իրական ուժերի հարաբերության։

Եվ եթե մենք քննադատում ենք «Խորհրդային Դաշնակցությունը», ոչ թե նրա համար, որ դաշնակցային կազմը բոլոր պարագաներում ժխտելի է մեզ համար, ընդհակառակը, այլ նրա համար նախ, որ Խորհրդային «Դաշնակցությունը» բնավ դաշնակցություն չէ և չէ կարող լինել։ Եվ երկրորդ նրա համար, որ այդ վարչաձևը պարտադրված է հայ ժողովրդին՝ օտարի ձեռքով, ավիների ուժովը։ Ապա թե ոչ, անկարելի բան չէ, մինչև իսկ հավանական է, որ—կրկնում ենք միշտ՝ տվյալ իրական պայմաններում հայ ժողովուրդը, ազգային կատարյալ ինքնորոշման իրավունք իսկ ունենալու պարագային՝ իր ազատ քվեն տա հօգուտ դաշնակցային կապի՝ ինչպես իր դրացիների, այնպես և Ռուսաստանի հետ։

Արդեն իսկ ազգերի ազատ ինքնորոշումն է ամեն մի իսկական ֆեդերացիայի հիմնը։

Ահա այդ՝ ազատ ինքնորոշման իրավունքն է, որին պիտի ձգտի հայ ազգային քաղաքականությունը, անկախ այն հանգամանքից, թե նա ի վերջո կատարյալ անկախության պիտի հանգի, թե դաշնակցային կամ դաշնագրային կապի՝ Անդրկովկասյան երկրների և Ռուսիո հետ միանգամայն։

11

Ազատ, անկախ և միացյալ Հայաստան—ահա, ուրեմն, հայ ազգային քաղաքականության գերագույն առարկան։ Իսկ ո՞րն է նրա ենթական, որո՞նք են նաև այն կողմնակի ազդակները, որոնք նպաստել կարող են այդ քաղաքականության հաջողության։

Անհրաժեշտ չէ, հարկավ, որ ներկա պայմաններում գոյություն ունենան բոլոր այն նախադրյալները, որ պետք են առաջադրված քաղաքական նպատակը կրագործելու համար։ Բայց նրանք պիտի լինին առհասարակ հնարավոր՝ գեթ քաղաքական նպաստավոր պայմաններում, պիտի բխին իրական կյանքից։

Ամեն մի ժողովրդի քաղաքական ճակատագիրը դարբնողը նախ և առաջ այդ ժողովուրդը ինքն է։ Կողմնակի ազդակները կարող են նպաստել կամ վնասել նրան, և սակայն տվյալ ժողովուրդը ինքն է, որ իրականացնել կարող է—և կամ անկարող է—իր քաղաքական իդեալը։

Այսպես նաև, հայ ժողովրդի վրա է ընկնում ողջ ծանրությունը սեփական դատի։ Նա իր ջանքերով ստեղծեց մի հայրենիք, ձեռք բերավ նրա համար ազատություն և անկախություն, հայությունը առնում էր նաև առաջին քայլերը հայրենի հողերի միացման, երբ կես ճամբուն մնաց և վրա տվավ իր քաղաքական նվաճումների մի խոշոր մասը։

Շատ է խոսվել պատճառների մասին, շատ ենք ծանրացել մանավանդ արտաքին պարագաների վրա, որոնք հիրավի վճռական դեր են խաղացել։ Եվ սակայն դա չէ նշանակում, թե ներքին պատճառները նվազ ճակատագրական են եղել։ Եվ դրանց թվում հիմնականն այն է, մեր կարծիքով, որ հայ ժողովուրդը առաջադրեց իրեն մի քաղաքական ծրագիր, որի ծանրության տակ պարզապես կքեց ինքը։

Հիշեցեք, թե 1918—1920 թվականների կարճ միջոցին որչափ ձևափոխություններ կրեցին հայկական հողային պահանջները,—ծովից ծով ծրագրից

մինչև Վիլսընյան և ավելի անձուկ սահմանները։

Հայ ժողովուրդը ի վիճակի՞ էր իր սեփական ուժերով իրագործելու այդ ծրագիրները։ Հարկավ ոչ։ Եվ մենք մեր աչքերը հառել էինք դեպի դուրս, մեր հույսերը կապել օտար ազդակների հետ, որոնք նպաստավոր պայմաններում միայն օժանդակել կարող էին և ոչ հանդիսանալ վարիչ ազդակ՝ իրենց համար համենայն դեպս մի օտար դատի։

Անցել են տարիներ, և մենք պարտավոր ենք վերագնահատության ենթարկել մեր անցյալը, ապագային խուսափելու համար նման սխալներից։

Արդյո՞ք մեր հողային առավելագույն պահանջները բխում էին Հայաստանի և հայ ժողովրդի կենսական շահերից, չասելու համար արդյո՞ք հասանելի էին նրա քաղաքական տարողության։ Հարկավ ոչ։ Եվ այդ առավելագույն պահանջները մեզ թելադրեցին—զանազան եսական նկատումներով—մի կողմից օտար դիվանագետները, իսկ մյուս կողմից՝ գաղութահայ բուրժուազիան, որի համար անընդունելի էր «Այրարատյան Հայաստանը», եթե նրա մեջ չմտներ Կիլիկիան։ Եվ որովհետև նրա, որպես անհող և հայրենախույս մի տարրի, ազգային ամբողջ քաղաքականությունը արմատներ չուներ և չունի բուն փոքր երկրի և ժողովրդի մեջ, դրա համար էլ նա ընդունակ է, որ [illegible] ընկնել։ Երեկ ծով ծով Հայաստան պահանջող մարդիկ այսօր պատրաստ են հաշտվել մինչև իսկ փոքրացած և մասնատված հայրենիքի ստրկացման փաստի հետ։

Թողնենք սակայն անցյալը, որ քաղաքական սրբագրողի դեր ունի ներկայի և ապագայի համար։

Պատմական բերումներով ներկայիս Հայաստանի սահմանների մեջ ապրում մեր ժողովրդի մի փոքր մասը միայն, հազիվ 1/4-ը։ Մնացածը կամ անդրկովկասյան սահմանամերձ երկրամասերում է ապրում, և կամ ցրված Կովկասի, Խորհ. Միության և արտասահմանի զանազան վայրերում։

Հայաստանի հայությունն է, որ կրողը պիտի հանդիսանա մեր ազգային քաղաքականության, նրա առաջ մղիչ ուժը։ Քանի որ, եթե ճիշտ ձևակերպեցինք, բացառապես Հայաստանն է նույն այդ քաղաքականության առարկան, ապա ուրեմն հասկանալի է և միակ ընդունելի այն ճշմարտությունը, թե՝ նրա վրա նստած ժողովուրդն էլ կրողը պիտի լինի այդ քաղաքականության։

Ուրիշ խոսքով՝ քանի որ հայկական խնդիր ասելով Հայաստանի խնդիր ենք հասկանում, նրա ազատության, անկախության և ընդարձակման խնդիր, ապա ուրեմն գա առաջ մղվել կարող է միայն և միայն Հայաստանի հայության ուժերով։ Սահմանամերձ հայությունը բաղդատաբար ավելի, իսկ գաղութների հայությունը նվազ չափերով օժանդակիչ ազդակներ միայն լինել կարող են, բայց ոչ երբեք՝ վարիչ և ղեկավար մեր ազգային—որ է՝ Հայաստանի-քաղաքականության։

12

Այսպես ուրեմն, երբ մենք խոսում ենք մեր ազգային—ասել է՝ Հայաստանի-քաղաքականության մասին, որպես վարիչ, առաջ մղիչ ուժ առնելու է երկրի ժողովուրդը միայն, գրսի հատվածների օժանդակիչ կամ խանգարիչ-արժեքը չմոռանալով հանդերձ։ Հայաստանի ժողովուրդն է միայն, որ պայքարել կարող է և հաջողացնել ի վերջո ինչպես իր ազատությունը, այնպես նաև իր անկախությունը և սահմանների ընդարձակումը։

Իսկ քաղաքական ի՞նչ հոսանքներ կան Հայաստանում, որ տարբեր իրենց դիրքից, արժեք են ներկայացնում այս խնդրում։ Միայն երկոսը—Հ. Հ. Դաշնակցությունը և համայնավար կուսակցությունը։ Եվ որովհետև վերջինս մասամբ միայն հայկական է, իսկ առավելապես օտար, ռուս համանուն կուսակցության հայկական հատվածը, ապա՝ որովհետև նրա «ազգային քաղաքականությունը» չէ ընդունում Հայաստանի խնդիր, այսինքն՝ տարբեր կամ ավելի ինչքան կա այստեղ, որովհետև Ջինվորների ու Ռատեքների բերանով արդեն իսկ «լուծված» է հռչակել հայկական դատը, ապա ուրեմն

Հ. Հ. Դաշնակցությունը կա և մնում է միակ ուժը երկրի մեջ, որ կենդանի է պահում ազատ, անկախ և միացյալ Հայաստանի նշանախոսքը, և որ պատեհ առթիվ նորեն պիտի ստանձնե ղեկավարողի դերը Հայաստանի ազգային քաղաքականության խնդրում։

Հ. Հ. Դաշնակցությունից և համայնավարներից դուրս, դժբախտաբար թե բարեբախտաբար քաղաքական ուրիշ հոսանքներ չկան Հայաստանում։ Լավ է թե վատ, պիտի ընդունիք փաստը։ Ռամկավարներ, սոցիալ-դեմոկրատներ, էսէրներ և հարակից տարրեր—գուցե գոյություն ունին անհատապես, բոլոր պարագաներում նրանք քաղաքական հոսանքներ և ազդակներ չեն եղած և չեն մանավանդ այժմ։

Վերցնենք գաղութները։

Այստեղ ևս նույն հիմնական և հակոտնյա հոսանքները։ Ճիշտ է, Ռամկավարները ավելի են քանակով և որակով, քան համայնավարները, բայց քանի որ նրանք չեն ներկայացնում ազգային ուրույն քաղաքականություն և ամբողջովին յուրացրել են համայնավարների «Հայաստանյան քաղաքականությունը», ապա ուրեմն այս խնդրում ևս նրանք չեն ներկայացնում ինքնուրույն ազդակ։ Թեկուզ օժանդակի դերում։

Ավելին դեռ։ Թող Ռամկավար հոսանքը լինի հայկական, թող նրա հետևողները լինին, իրենց իմաստով, գերազանց հայեր, բայց որովհետև նրանք հայրենախույս, գաղութածին տարր են և որևէ արմատ չունին Հայաստանի իրականության մեջ, այդ պատճառով էլ նրանց Հայաստանյան քաղաքականությունը—լինի կողմնակի ձևով—ավելի վնաս է տվել և կը տա Հայաստանի դատին, քան՝ օգուտ, քանի որ անհո՛ղ է միանգամայն, լավագույն պարագային՝ սոսկ զգացմունքի արդյունք։

Հ. Հ. Դաշնակցության արտահայաստանյան հատվածներին ևս, ինչ խոսք, միայն օժանդակողի դեր է վերապահված այս խնդրում։ Եվ մեծ է, անփոխարինելի այդ դերը հատկապես և մանավանդ նրա համար, որ ոչ միայն այդ հատվածների կուսակցական կազմը մեծապես Հայաստանյան է, Հայաստանի սահմաններից եկած, տակավին նրա հետ հազար-հազար ներքին թելերով կապված տարբերից բաղկացած, այլև այն պատճառով, որ արտասահմանյան Հ. Հ. Դաշնակցությունը իր ազգային ողջ քաղաքականությունը հիմնում է երկրի իրականության վրա, իր բոլոր քայլերը թելադրում է Հայաստանի իրականությունից, մշտարթուն, ուշադիր ունկնդիր է հայրենիքից եկած ձայներին և թելադրանքներին։ Կարճ՝ նա վարում է Հայաստանյան քաղաքականություն, որովհետև նրա խարիսխը Հայաստանյան է, որովհետև ինքն էլ գերազանցորեն Հայաստանյան կուսակցություն է։ Այդպես չէ Ռամկավար կուսակցությունը։ Լավագույն դեպքում նա իսկապես գաղութահայ մի հոսանք է, մի ուղղություն, և ոչ իսկ կուսակցություն, որովհետև չունի և ի վիճակի էլ չէ ունենալու երկրային քաղաքականություն։ Իր հետևողներն էլ բացառապես գաղութածին հայեր են, մեծ մասով մինչև իսկ Հայաստանի երեսը չտեսած մարդիկ։

Ոչ պակաս կարևորություն ունի և այն պարագան, որ մինչ Հ. Հ. Դաշնակցության ազգային քաղաքականության համար Հայաստանը ինքնանպատակ է, համայնավարների և նրանց հետևից գնացող տարրերի համար նա փաստորեն միջոց է տարբեր նպատակների համար։ Եթե պետք լինի, օրինակ «համաշխարհային հեղափոխության» համար զոհ բերել Հայաստանը, այդ կանեն նրանք։ Եվ մեկից ավելի ապացույցներ էլ տվել են այդ ուղղությամբ։ Եվ դա նրա համար, որ նրանց գլխավոր և գրեթե միակ հենարանը արտաքին, օտար ուժերն են։

Մարդիկ, որ օրն ի բուն քննադատում են Հ. Հ. Դաշնակցությունը այն պատճառով ևս, որ սա հաճախ «գործիք» է դարձել աշխարհակալ դիվանագիտության ձեռքին, նույն այդ մարդիկ այսօր կամովին և կուրորեն ինքնինքնին և իրենց վարած երկիրը ամբողջովին արամադրել և ստորագրել են

մի օտար, խորթ դիվանագիտության և ծրագիրների: Մարդիկ, որոնք չեն քաշվում օրն ի բուն անդուռն բերանով խարանելու սեփական ժողովրդի ազատագրությունը հետապնդող պայքարը անցյալում, աշխարհակալական և արկածախնդրական որակելով այն, ելեր են այսօր ու հրավեր են կարդում մեր կոտորակված բազմություններին՝ Սիրիայի դաշտերում արյուն ոթելու մի օտար դատի համար։

Ինչո՞ւ ծածկել։ Հայ ազատագրական շարժումը իր մանկության օրերին բազմիցս է սայթաքել, հաճախ է նա գործիք ծառայեցվել օտար ուժերի ձեռքին, օտար նպատակների համար։ Բայց այդ սխալները միշտ էլ առաջացել են անփորձությունից, կատարվել են սեփական դատին ծառայելու, թեև հաճախ միամիտ, այլ սրբազան հավատքով, վերջապես՝ անգիտակցաբար։ Եվ մեզ այդ ամենի մեջ մեղադրողները նույնը և շատ ավելին անում են այսօր գիտակցաբար, այն ևս այսքան տարիների փորձերից և փորձանքներից հետո։

Ահա թե ինչու նման քայլերը կրում են ոչ թե քաղաքական սխալների բնույթ, այլ պարզապես հանդիսանում են քաղաքական հանցանքներ և ոճիրներ։

Այստեղ մենք չենք խոսում գաղութահայ կյանքի ուրիշ երևույթների մասին—մշակույթ. գրականություն, մամուլ, կազմակերպություններ և այլն—որոնք, անշուշտ, կարևոր գործոններ են ինքնին։ Եվ սակայն այդ ամենը քաղաքական հոսանքների միջոցով, նրանց խողովակով է միայն, որ կարող է —միշտ էլ օժանդակի դերում—սպաս դրվել ազգային քաղաքականության ընդհանուր նպատակներին։

Արտաքին, օտար ազդակներին ևս բնականաբար կողմնակի դեր միայն վերապահել կարելի է ազգային քաղաքականության խնդրում։ Անգիտակից, ինքնուրույն կյանքի պահանջ չունեցող ժողովուրդների համար արտաքին ամենարարենպաստ պայմաններն անգամ փ զորու չեն՝ քաղաքական կյանք ներշնչելու։ Լավագույն դեպքում սոսկ օտար ուժերի ձեռքով ի կյանս կոչված պետական միավորները, անգամ եթե գոյության իրավունք է վիճակված նրանց, նույն այդ ուժերին մշտապես ծառայելո՞ւ են դատապարտված։

13

Եվ այսպես, հայ ազգային քաղաքականության գերագույն առարկան Ազատ, Անկախ և Միացյալ Հայաստանն է, նրա առաջնորդիչ ուժը՝ Հայաստանի ժողովուրդը, իսկ օժանդակ ազդակները՝ գաղութահայ հատվածները և արտաքին նպաստավոր պայմանները։

Եվ սակայն արտաքին ազդակները կարող են որչափ նպաստավոր, այնչափ էլ աննպաստ դասավորվել մեզ համար։ Դրա բազմաթիվ փորձերը ունինք արդեն։ Ազգային քաղաքականության հիմնական խնդիրներից մեկը պիտի լինի ահա՝ ոչ միայն ջանալ պահել և շատացնել նպաստող արտաքին ազդակները, այլև խափանել, վերացնել աննպաստները և, եթե հնարավոր է, այդ վերջինները մինչև իսկ նպաստավոր դարձնել իր համար։

Ռուսաստանի մասին խոսեցինք արդեն։ Չծանրանանք ավելի հեռավորների վրա։ Վեր առնենք միայն Անգլիան, որ Ռուսաստանի հետ միասին և նրան համահավասար վճռական, երբեմն մինչև իսկ ճակատագրական դեր է խաղացել մեր հարցում։

Հայ դատի պատմությունը ցույց է տալիս, որ նրա անհաջողությունները, նրա կրած պարտությունները մեծագույն մասով այդ երկու հզոր, աշխարհակալ պետությունների հակամարտությանց հետևանք են։ Երկուսն էլ դավել ու գավտդրել են մեզ մի ամբողջ հիսնամյակի ընթացքում, սկսած Սան-Ստեֆանոյից մինչև Լոզան։ Անգլիան ավելի, մեր կարծիքով, քան Ռուսիան։

Մի կարճ միջոց միայն, 1918—1920, անգլիական արևելյան քաղաքա-

կանությունը նպաստավոր ընթացք առավ մեզ համար, այլապես նա միշտ էլ Պիղատոսի դերում է եղել Հայաստանի հանդեպ, հարկավ՝ որպես Ռուսաստանի ոսոխ։ Վերջին անգամին էլ, 1920—1921-ին, կարմրա՜ծ Ռուսաստանը մեզ զո՜հ բերավ իր հականգլիական քաղաքականության, մեր կիսակենդան մարմնի վրայով ձեռք մեկնելով Տաճկաստանին։

Բաղդատարար տանելի վիճակ ստեղծվեց մեր երկրի ու ժողովրդի համար 1907—1917-ի տասնամյա միջնարարին, երբ երբեմնի ոսոխները համաձայնության եկան, ընդդեմ ընդհանուր հակառակորդի՝ Գերմանիայի։

Այդ միջոցին էր, որ մշակվեց ու ընդունվեց նաև Տաճկահայաստանի բարեփոխության ծրագիրը (1914, հունվար), որ սակայն համաշխարհային պատերազմը եկավ սրբեց։

Եվ որչափ երկա՜ր տևի անգլո-ռուս հակամարտությունը, այնքան վատ փոքրիկ Հայաստանի համար։ Մի ուրիշ դժբախտ օր ևս կարող է այդ հակամարտությունը ուժգնորեն շղթայազերծվի ու նորե՜ն զոհ մարտի թատր դարձնել Հայաստանը, կրկին ավերակների կույտեր ստեղծել այնտեղ։ Ինչ տարակույս, որ այդ երկու՝ հավասարապես աշխարհակալ, ոսոխ պետությունների վճռական մարտին հրապարակ պիտի նետվին ուրիշ ուժեր ևս, ուժեր, որոնք հարմար առիթ են որոնում՝ ոտնատակ տալու մեր երկիրը։

Ահա թե ինչու մեծապես վտանգավոր են, դարձյալ մեր շահերի տեսակետից, այն ռազմաշունչ ճառերը և հոխորտանքները, որ խորհրդային աշխարհակալության հայ գործակալները օրն ի բուն փչում են բրիտանական աշխարհակալների հասցեին։ Առնվազն 1—2 սերունդ հանգիստ և խաղաղություն վայելելու անհրաժեշտությունն ունի Հայաստան՝ ազգայնապես և տնտեսապես կազդուրվելու, նոր ուժեր հավաքելու համար։

Վասնզի ո՜չ միայն անհնար չէ, այլև հավանական է խիստ, որ եթե ոչ վաղը, բայց հաջորդ օրը անպայմա՜ն համաձայնության գա Անգլիան Տաճկաստանի հետ և, այսպիսով, ռուս-անգլիական մի նոր գոտեմարտի մեջ Տաճկաստանը ևս խառնվի։

Հասկանալի է նաև, թե նման պարագայի նրանից, Տաճկաստանից դուրս մեզ շրջապատող ուրիշ ի՜նչ ուժեր ևս պիտի մասնակցություն բերեն ընդհանուր պայքարին։ Հասկանալի է այն ևս, որ այդ դեպքում Հայաստանը նորեն ռազմաբեմ պիտի դառնա իր համար բոլորովին օտա՜ր նպատակների ու խորթ պայքարի, կրկի՜ն անգամ մահացուորեն ոտան կոխան լինի մեր արյունաքամ հայրենիքը։

Լա՜վ, եթե բախման միջոցին Տաճկաստանը Ռուսիո կողքին լինի, շարունակելով մնալ նրա դաշնակիցը։ Այդ պարագային գեթ մեր երկիրը դուրս կը մնա կռվի անմիջական շրջանակից և Անդլիո հավանական հաղթության պարագային Հայաստանի և հայ ժողովրդի կրկնակ թշնամիները, խորհրդային Ռուսիան և Թուրքիան, տապալվելով միասնաբար՝ նրանց ավերակների տակից էլ թերևս հայությունն ու Հայաստանը ևս տեր դառնան իրենց իրավունքին։

Եվ սակայն մենք պարտավոր ենք նախատեսել և առաջի՜ն հնարավորությունը, որով և պետք է վարել մեր ազգային քաղաքականությունը մի այնպիսի հունով, ուր ըստ հնարավորին պակաս լինին խութերը։

Այս խնդիրը, Հայաստանի արտաքին քաղաքականությունը, ինչպես նաև մեր ու մեր դրացիների փոխհարաբերությունը, առանձին նյութեր են, դուրս՝ ներկա հոդվածի շրջանակից։ Հայ ազգային քաղաքականությունը պետք է հիմնվի միայն և միայն իր սեփական ուժերի, մեր երկրի իրական պայմանների մրա, հարկավ օգտագործել չանալով օտար ազդակները։

Դժբախտաբար դառն իրականությունը ա՜յն է, որ դեռ այսօր էլ օտար ուժերն են շարունակում մեզ օգտագործել՝ հոգուտ իրենց եսական նահեռի, պառակտելով մեր ազգային ճակատը։ 1918—1920-ին նրանք նույն այդ նպատակով ստեղծեցին «երկու Հայաստաններ»-ի խնդիր, ընդդեմ Հայաստանի առաջ քշեցին Կիլիկիան ու «Հայկական օջախը», Հայաստանի քա-

ղաքական ներկայացուցչության կից ստեղծել տվին և պաշտպանեցին մի երկրորդ ա. կ. «Ազգային Պատվիրակություն», լարեցին նրանց իրար դեմ, մեր ձեռքերով իրենց համար շագանակներ հանեցին կրակի միջից, հերթով ու միասնաբար դավեցին ու դավադրեցին ինչպես իրար, այնպես էլ, մի՛շտ ու հանապազ, մեր արյունաքամ ժողովրդի դեմ։ Անգամ այսո՛ր նրանք շարունակում են իրենց հայասպան դերը նրանով, որ օրինակ ամերիկյան «Հայասեր» միսիոներների ու հայ մարդկանց ձեռքով խլել են ուզում արտաքին ճակատի վրա մեր ձեռքին մնացած փոքրիկ զենքերն իսկ։

Մյուս կողմից՝ կարմիր պատմուճան հագած Ռուսաստանն է շարունակում իր թմբուկը զարնող հայ բոլշևիկների ձեռքով Հայաստանը օգտագործել իր արտաքին նպատակների համար։ Ավելին դեռ։ Միջնորդապես կամ անմիջապես նա որոմներ է ցանում արտասահմանի հայության մեջ և, որպես կամազուրկ խաղալիքներ գործածում ոչ միայն համայնավար հայերին, այլև գաղութահայ բուրժուազիան։ Վերջին հաշվով՝ Մոսկվայի ձեռքում չտեսնելու համար այդ դավադրության կծիկը՝ կույր պետք է լինել և կամ անգետ՝ քաղաքական տարրական հարցերում։ Երևանի և Թիֆլիսի քաղաքական ճամփաս ա՝ Մոսկվայի վրայով է անցնում։ Աչքաթող անելու չէ երբեք այս տարրական ճշմարտությունը։

Ամփոփենք։ Ազատ, Անկախ և Միացյալ Հայաստանը մեր ազգային քաղաքականության կետ-նպատակն է։

Այդ նպատակը հետապնդող միակ իրական և վստահելի ուժը Հայաստանի ժողովուրդն է։ Վերջինիս իրական կարողությանը համապատասխան, տանելի պիտի լինի հայ ազգ. քաղաքականությունը՝ իր բոլոր փուլերում, որ հանդրվաններով միայն կարող է զարգանալ։

Արտասահմանի հայ հատվածները օժանդակողի դեր միայն խաղալ կարող են, հատկապես նրանք, որոնք ոչ միայն զգացումով, այլև ծագումով ու մոտիկ անցյալով, ինչպես նաև ուրիշ թելերով անխզելիորեն կապված են Հայաստանի հետ։

Այդ տարրերը ներկայիս արտասահմանում դեգերող մեր աշխատավո՛ր, Հայաստանցի զանգվածներն են, որոնք առաջի՛ն հերթին իրենց բազուկը և միտքը պատրաստ են ի սպաս դնելու հայրենիքին։

Գաղութահայ բուրժուազիան, որ մեծամասնությամբ գաղութածին է և մի փոշոր չափով օտարացա՛ծ շահերով ու զգացումներով, նյութապես և մշակութորեն միայն կարող է օգտակար լինել։ Բայց նա անտարբերի՛ դերում է հանդես գալիս հաճախ, երբեմն մինչև իսկ վնասակա՛ր դիրք է բռնում հանդեպ Հայաստանի և հայ ազգ. քաղաքականության՝ իր գործո՛ղ, հակառակ իր խոսքերի։ Օտար դիվանագիտության ձեռքին շարունակել խաղալիք մնալը, արտասահմանի ազգային դրամագլուխների փոխադրությունը Հայաստան արգելելը և այլն, փաստեր են ասածներիս։

Ազգային ճակատի հաստատումը հրամայական պահանջ է։ Արտաքին, օտար ուժերը կարող են, նայած պայմաններին, օգտակար կամ վնասակար լինել մեր ազգ. քաղաքականության համար։ Վերջինս պետք է ուշադիր հետևի նրան և հոգուտ իր ուղղել ջանա այն։

Վճռական նշանակություն ունի, մեր դատի համար, վերջապես, նաև մեր ու մեր հարևանների փոխհարաբերության կարգավորումը։